oxYGen

Women's Peace & Humanitarian Fund
A United Nations & Civil Society Partnership

Netherlands Institute for Multiparty Democracy

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստան 2025

Այս հրապարակումը պատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության կանանց խաղաղության և մարդասիրական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ «Կանանց հզորացում՝ հանուն տեւական խաղաղության» ծրագրի շրջանակում: Այնուամենայնիվ, բովանդակությունը և տեղ գտած կարծիքները չեն արտահայտում Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական դիրքորոշումը:

Ծրագիրը իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից Նիդերլանդների բազմակուսականցական ժողովրդավարության ինստիտուտի հետ համագործակությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության կանանց խաղաղության և մարդասիրական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Միավորված ազգերի կազմակերպության կանանց խաղաղության և մարդասիրական հիմնադրամի արագ արձագանքման պատուհանը ֆինանսավորման մեխանիզմ է, որը խաղաղության և խաղաղության համաձայնագրերի իրականացման գործընթացներում կանանց ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով և կարճաժամկետ թիրախային աջակցության միջոցով լրացնում է հրատապ ֆինանսավորման բացերը:

Միավորված ազգերի կազմակերպության կանանց խաղաղության և մարդասիրական հիմնադրամը ֆինանսական ճկուն գործիք է՝ աջակցելու արդյունավետ գործողություններին, որոնք ուղղված են տեղացի կանանց կարողությունների զարգացմանը՝ կոնֆլիկտների կանխման, ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների արձագանքման և խաղաղաշինության առանցքային հնարավորություններից օգտվելու համար:

Բովանդակություն

Ամփոփում 4

I. Ներածություն 6

II. Մեթոդաբանություն 9

III. Համատեքստ և իրավիճակի վերլուծություն 11

3.1. Կանանց իրավիճակը ՀՀ-ում 11

3.2. Կարիքներ և ընկալումներ 15

4.3. Խաղաղության բազմաշերտ ընկալումը 15

3.4. Կանանց առանձնահատուկ ներդրումը խաղաղաշինության մեջ 17

3.5. Խաղաղության հաստատման համակարգային խոչընդոտները 19

3.6. Անվտանգության հետ կապված մարտահրավերներ 21

3.7. Խաղաղաշինության գործընթացներում խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքները 22

IV. Միջազգային փորձ 25

4.1. Կոլումբիայի օրինակը 25

4.1.1. Նախապատմություն և համատեքստ 25

4.1.2. Հակամարտության ազդեցությունը 25

4.1.3. Ինստիտուցիոնալ արձագանքն ու բարեփոխումները 26

4.1.4. Քաղաքացիական հասարակության դերը խաղաղության բանակցություններում 26

4.1.5. Համայնքային մակարդակի խաղաղաշինություն 27

4.1.6. Մարտահրավերներ և շարունակական ջանքեր 27

V. Եզրակացություն եւ առաջարկություններ 29

Ներդիր. Խաղաղության գենդերազգայուն և գենդերարձագանքող համաձայնագրի ստուգաթերթ 38

Գրականության ցանկ 43

Ամփոփում

Կանանց դերը խաղաղաշինական գործընթացներում վճռորոշ նշանակություն ունի կայուն և երկարատև խաղաղության հաստատման համար: Թեև միջազգային հանրությունը, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհուրդը իր 1325 բանաձևով[1], շեշտում է խաղաղության գործընթացներում կանանց ներգրավվածության կարևորությունը, Հայաստանում այս ուղղությամբ դեռևս անելիքներ կան: Այնուամենայնիվ, վերջին տարիներին իրականացված քաղաքական քայլերն ու գենդերային զգայուն մոտեցումները փոքր, բայց կարևոր արդյունքներ են բերել՝ խթանելով կանանց դերը հասարակական կյանքում:

2019 թվականին Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) հաստատեց Գործողությունների ազգային ծրագիրը (ԳԱԾ)՝ ՄԱԿ-ի 1325 բանաձևի դրույթների իրականացման նպատակով, իսկ 2022 թվականի հունիսի 2-ին ընդունվեց գործողությունների երկրորդ ծրագիրը: Այս քայլերը կարևոր հիմք ստեղծեցին կանանց ներգրավվածության համար խաղաղության և անվտանգության ոլորտներում, և դրանց ընդունումը վկայում է, որ ՀՀ կառավարությունը ճանաչում է կանանց դերը խաղաղաշինական գործընթացներում:

Չնայած այս էական առաջընթացին, կանանց մասնակցությունը թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական խաղաղաշինական նախաձեռնություններում դեռևս լիարժեք չի ապահովվում: Խաղաղության գործընթացներում կանանց փորձն ու կարիքները հաճախ լիարժեք չեն արտացոլվում, ինչը սահմանափակում է ներառական և կայուն լուծումների հնարավորությունները:

Այս խնդիրն առավել զգալի է սահմանամերձ համայնքներում, որտեղ կանանց դերն առանցքային է ոչ միայն համայնքային կայունության, այլև անվտանգության ամրապնդման համար: Գործողությունների ազգային ծրագրի և այլ նախաձեռնությունների իրականացումը դրական հիմք է ստեղծել, սակայն կարիք կա հավելյալ քայլերի՝ համակարգային խոչընդոտների հաղթահարման և կանանց ազդեցության մեծացման ուղղությամբ: Միջազգային փորձը կարող է արժեքավոր ուղենիշ հանդիսանալ Հայաստանի համար՝ խաղաղաշինության մեջ կանանց դերակատարությունն ընդլայնելու և նրանց կարիքները պատշաճ կերպով հաշվի առնելու տեսանկյունից:

[1] United Nations, "Landmark Resolution on Women, Peace and Security (Security Council Resolution 1325)," Un.org (United Nations, 2000), https://www.un.org/womenwatch/osagi/wps/.

Փաստաթուղթը մշակվել է խաղաղաշինական գործընթացներում կանանց ներգրավվածության խոչընդոտները վերլուծելու և միջազգային փորձի հիման վրա լուծումներ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով՝ ապահովելու գենդերային հավասարության սկզբունքների ներառումն ու կիրառումը խաղաղության պայմանագրերում՝ հաշվի առնելով կանանց կարիքները։

I. Ներածություն

Խաղաղաշինական գործընթացներում կանանց մասնակցությունն ունի առանցքային նշանակություն՝ սկսած հակամարտությունների կանխարգելումից մինչև հետպատերազմյան վերականգնում: Հետազոտությունները հստակ ցույց են տալիս, որ կանանց ներգրավվածությունը նշանակալիորեն բարձրացնում է խաղաղության համաձայնագրերի երկարաժամկետ կայունությունը: Մասնավորապես, կանանց մասնակցությունը 20 տոկոսով ավելացնում է խաղաղության համաձայնագրի՝ առնվազն երկու տարի պահպանվելու հավանականությունը, իսկ 15 տարվա կտրվածքով այդ ցուցանիշն աճում է 35 տոկոսով[2]:

Կանանց մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման գործընթացում արտահայտվում է նրանց առաջնորդությամբ համայնքային խաղաղության նախաձեռնություններում, սոցիալական ներդաշնակության պահպանման գործում և վաղ նախազգուշացման մեխանիզմների ձևավորման մեջ: Հետպատերազմյան վերականգնման փուլում նրանք հաճախ կարևոր դեր են ստանձնում համայնքների վերակառուցման, սոցիալական ծառայությունների վերականգնման և հաշտեցման գործընթացների մեջ: Կանայք, հատկապես տեղական մակարդակում, հնարավորություն ունեն վերակառուցել ոչ միայն ֆիզիկական ենթակառուցվածքները, այլև վերականգնել հասարակության սոցիալական կապերը՝ նպաստելով վստահության ամրապնդմանը և ապագա հակամարտությունների կանխարգելմանը[3]:

Այնուամենայնիվ, չնայած այս ակնհայտ առավելություններին, կանանց ներգրավվածությունը պաշտոնական խաղաղության գործընթացներում շարունակում է մնալ անբավարար: 2022 թվականի տվյալներով՝ ՄԱԿ-ի ղեկավարությամբ կամ համաղեկավարությամբ իրականացվող ընթացիկ խաղաղության գործընթացներում կին բանակցողները կազմել են ընդամենը 16 տոկոս, ինչը նվազում է 2020 թվականի 23 տոկոսի համեմատ[4]:

Առավել մտահոգիչ է, որ մի շարք հակամարտություններում, օրինակ Եթովպիայում, Մյանմարում, Բալկաններում, Սուդանում և Եմենում, բանակցային թիմերում կանայք ընդհանրապես ներկայացված չեն եղել: Միակ բացառությունը

[2] UN Women, "Women's Participation and a Better Understanding of the Political | Global Study on the Implementation of UN Security Council Resolution 1325," Unwomen.org, 2015, https://wps.unwomen.org/participation/.
[3] GIWPS, "Advancing Women's Participation in Post-Conflict Reconstruction," GIWPS, August 9, 2021, https://giwps.georgetown.edu/resource/advancing-womens-participation-in-post-conflict-reconstruction/.
[4] Council on Foreign Relations, "Including Women at the Peace Table Produces Better Outcomes," Council on Foreign Relations, 2019, https://cfr.org/womens-participation-in-peace-processes/.

Կոլումբիան է, որտեղ կանայք գրեթե հավասարաչափ են ներկայացված եղել թե՛ կառավարության, թե՛ ընդդիմադիր ուժերի բանակցային թիմերում: 2022 թվականին կնքված խաղաղության 18 համաձայնագրերից միայն մեկն է ստորագրվել կնոջ կողմից, ինչը վկայում է որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության խորը անհամաչափության մասին[5]:

Այս համատեքստում հատկանշական է, որ խաղաղապահական գործողություններում կանանց ներգրավվածությունը նույնպես շարունակում է մնալ անհամաչափ ցածր: ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելություններում կանայք կազմում են ռազմական անձնակազմի ընդամենը 6.5 տոկոսը և ոստիկանական ուժերի 15.8 տոկոսը[6]: Այս ցուցանիշները խոսում են խաղաղապահ գործողություններում գենդերային անհավասարության պահպանման մասին: Ավելին՝ 2015-2023 թվականների ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների միայն 22 տոկոսն էին կանայք[7]: Այս ցածր ներկայացվածությունն անմիջականորեն արտացոլում է կանանց խոցելիությունը համաշխարհային ճգնաժամերի ընթացքում:

Իրավիճակն ավելի է վատթարանում հակամարտության գոտիներում ապրող կանանց համար: 2023 թվականին կանանց և աղջիկների սննդային անապահովության և կրթության իրավիճակը խիստ անհանգստացնող է: Տվյալների համաձայն, յուրաքանչյուր չորրորդ կին և աղջիկ բախվել է չափավոր կամ ծանր սննդային անապահովության, իսկ հակամարտության գոտիներում այս ցուցանիշն էլ ավելի բարձր էր՝ հասնելով յուրաքանչյուր երկրորդ կնոջ և աղջկա: Իրավիճակն էլ ավելի է բարդացել 2023 թվականին, երբ 19 երկրում, որտեղ առկա էին բարդ մարդասիրական իրավիճակներ, գրանցվել է առողջապահական հաստատությունների վրա 1521 հարձակում, որոնց հետևանքով ավելի քան 2000 մարդ վիրավորվել կամ մահացել է: Հայիթիում, Մալիում, Մյանմարում, Սուդանում, Ուկրաինայում և Պաղեստինի տարածքում այս հարձակումները միլիոնավոր կանանց զրկել են կենսական ծառայություններից, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջապահական օգնությունից:[8]

Այս գլոբալ միտումները հատկապես արդիական են ՀՀ համատեքստում, որտեղ տարածաշրջանային հակամարտությունները նույնպես խորը ազդեցություն են թողել կանանց և աղջիկների կյանքի վրա: ՀՀ-ն, որպես Հարավային Կովկասի ռազմավարական նշանակություն ունեցող պետություն, պատմականորեն գտնվել է

[5] Նույն տեղում:
[6] UN Women, "Facts and Figures: Peace and Security," UN Women, 2023, https://www.unwomen.org/en/what-we-do/peace-and-security/facts-and-figures.
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:

տարածաշրջանային և համաշխարհային ուժերի շահերի բախման կենտրոնում: Այս իրավիճակը հանգեցրել է բազմաթիվ հակամարտությունների և հասարակական-տնտեսական մարտահրավերների: Հատկանշական է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը 1988 թվականից սկսած դարձել է տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումները պայմանավորող առանցքային գործոններից մեկը:

2020 թվականի 44-օրյա պատերազմը էականորեն փոխեց տարածաշրջանային ուժերի հարաբերակցությունը և հանգեցրեց նոր մարդասիրական մարտահրավերների: Հակամարտության հետևանքով տեղի ունեցած զանգվածային տեղահանումը և մարդկային կորուստները ստեղծեցին նոր սոցիալ-տնտեսական իրողություններ: Ներկայիս վիճակագրական տվյալները վկայում են, որ չնայած կանայք կազմում են ՀՀ բնակչության 52.8 տոկոսը[9], նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում շարունակում է մնալ անհամաչափ: Մասնավորապես, կանայք զբաղեցնում են վարձատրվող աշխատատեղերի միայն 44 տոկոսը, իսկ ղեկավար պաշտոններում նրանց ներկայացվածությունը երկու անգամ զիջում է տղամարդկանց ցուցանիշին:

Հատկապես մտահոգիչ է, որ որոշումների կայացման գործընթացներում, ինչպես օրինակ համայնքային կամ պետական մակարդակներում, կանանց ձայնը հաճախ չի ներկայացվում կամ անտեսվում է: Այս անհամաչափությունը նաև անդրադառնում է խաղաղաշինության վրա, որտեղ կանանց ներուժը լիովին չի օգտագործվում: Տվյալները ցույց են տալիս, որ կանայք կարող են դառնալ կարևոր գործոն ինչպես հակամարտությունների կանխարգելման, այնպես էլ հետպատերազմյան վերականգնման գործընթացներում: Օրինակ՝ Կոլումբիայի խաղաղության գործընթացում (2016) կանանց ակտիվ ներգրավվածությունը նպաստեց, որ խաղաղության համաձայնագրում ընդգրկվեն սեռական բռնության դեմ պաշտպանական դրույթներ և հողային իրավունքների բարեփոխումներ: Սակայն, առանց հատուկ քաղաքական միջոցառումների, այս ներուժը շարունակում է մնալ չիրացված:

Այս համատեքստում հատկապես կարևոր է խաղաղաշինության ոլորտում կանանց մասնակցության ընդլայնումը՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքներն ու ներուժը: Կանանց ներառումը խաղաղության գործընթացներում կարող է ապահովել ոչ միայն սոցիալական և տնտեսական հավասարության բարձրացում, այլև երկարաժամկետ կայունություն և խաղաղություն՝ թե՛ տեղական, թե՛ ազգային մակարդակներում:

[9] ՀՀ վիճակագրական կոմիտե. «Հայաստանի կանայք և տղամարդիկ» https://armstat.am/file/article/gender_2024.pdf

II. Մեթոդաբանություն

Այս վերլուծությունը նպատակ ունի բացահայտելու կանանց դերը խաղաղաշինական գործընթացներում՝ հաշվի առնելով նրանց մասնակցության խոչընդոտներն ու հնարավորությունները: Ուսումնասիրությունն իրականացվել է համակցված մեթոդաբանությամբ՝ օգտագործելով որակական և քանակական տվյալների հավաքագրման և վերլուծության գործիքներ:

Տվյալների հավաքագրման համար կիրառվել են երեք հիմնական մեթոդներ: Առաջին հերթին, իրականացվել է 8 ֆոկուս խմբային քննարկում (ՖԽՔ)՝ ներգրավելով կանանց տարբեր խմբերի՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության ակտիվիստներ, կրթական հաստատությունների աշխատակիցներ, գործարար կանայք, տեղահանված կանայք: ՖԽՔ-ներն անցկացվել են Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում, որտեղ խաղաղության և անվտանգության հարցերը համայնքային մակարդակում առավել սուր են դրսևորվում: Ընդհանուր առմամբ, մասնակցել է 80 կին, որոնց փորձառություններն ու տեսակետները հնարավորություն տվեցին ոչ միայն հասկանալու կանանց խաղաղաշինական ընկալումները, այլև վերհանելու նրանց առջև ծառացած խոչընդոտներն ու կարիքները:

Երկրորդ՝ իրականացվել է փաստաթղթային վերլուծություն, որի շրջանակում ուսումնասիրվել են ՀՀ պետական ռազմավարական փաստաթղթերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի, Եվրոպական միության (ԵՄ) և ակադեմիական շրջանակների կողմից պատրաստված զեկույցները: Այս վերլուծությունը թույլ տվեց համադրել ՀՀ-ում կանանց մասնակցության մակարդակն ու մարտահրավերները միջազգային չափանիշների և խաղաղաշինական լավագույն փորձերի հետ:

Երրորդ՝ իրականացվել է համեմատական և ինստիտուցիոնալ վերլուծություն: ՀՀ իրավիճակը համադրվել է միջազգային խաղաղաշինական մոդելների հետ՝ ընդգծելու հաջողված փորձառությունները, որոնք կարող են կիրառելի լինել տեղական համատեքստում: Միևնույն ժամանակ, վերլուծվել են կանանց մասնակցության խոչընդոտները պետական կառույցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում և քաղաքացիական հասարակության շրջանակում՝ պարզելու, թե ինչ ինստիտուցիոնալ փոփոխություններ են անհրաժեշտ դրանց հաղթահարման համար:

Ընտրված մեթոդաբանություն ունի որոշակի սահմանափակումներ: Չնայած սահմանամերձ երեք մարզերի ընդգրկմանը, ՖԽՔ-ները չեն ընդգրկել ՀՀ բոլոր

տարածաշրջանները, ինչը կարող էր ապահովել ավելի լայն պատկերացում: Մասնակիցների մեծ մասը տեղյակ էր խաղաղաշինական գործընթացներից, ուստի արդյունքները կարող են մասամբ արտացոլել առավել ակտիվ ներգրավված կանանց տեսակետները: Ինչպես նաև տվյալների սահմանափակ հասանելիությունը որոշ չափով դժվարացրել է համապարփակ վերլուծության իրականացումը:

III. Համատեքստ և իրավիճակի վերլուծություն

3.1. Կանանց իրավիճակը ՀՀ-ում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2024» զեկույցի ՀՀ-ում կանայք կազմում են բնակչության 52,8 տոկոսը՝ ցուցադրելով բարձր ցուցանիշներ բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճաններում, համապատասխանաբար՝ 2023 թվականին մագիստրոսական ծրագրերում ավարտական աստիճան ստացել է կանանց 69 տոկոսը (տղամարդկանց՝ 31 տոկոսը)։ Սակայն հետբուհական կրթության մակարդակում նկատվում է հակառակ պատկեր։ Ասպիրանտուրայում տղամարդիկ կազմում են շրջանավարտների 57 տոկոսը, իսկ կանայք 43 տոկոսը։ Դոկտորատուրայում այս ցուցանիշն էլ ավելի է բարձրանում՝ հասնելով 62 տոկոսի տղամարդկանց շրջանում և 38 տոկոսի կանանց շրջանում[10]։

2023 թվականին 15-74 տարեկան բնակչության շրջանում աշխատուժից դուրս մնացած կանանց թիվը 1.8 անգամ գերազանցում է տղամարդկանց թիվը՝ հանգեցնելով 44.1 տոկոս գենդերային խզվածքի։ Բացի այդ, վարձատրվող աշխատանք ունեցող տղամարդիկ կազմում են 56 տոկոս, ինչը 12 տոկոսով գերազանցում է կանանց ցուցանիշը (44 տոկոս), մինչդեռ չվարձատրվող աշխատանք կատարող կանանց ցուցանիշը կազմում է 63 տոկոս, ինչը 24 տոկոսով ավելի է, քան տղամարդկանց ցուցանիշը (37 տոկոս)։ Հատկանշական է, որ ղեկավար պաշտոններ զբաղեցնող տղամարդիկ երկու անգամ գերազանցում են կանանց։

2023 թվականին ՀՀ-ում միջին աշխատավարձը կանանց և տղամարդկանց միջև զգալի տարբերություններ ունի՝ հանգեցնելով 40.7 տոկոս գենդերային վարձատրության խզվածքի։ Հանրային հատվածում կանայք միջինում ստանում են 178,461 դրամ, իսկ տղամարդիկ՝ 268,055 դրամ, ինչը կազմում է 33.4 տոկոս գենդերային խզվածք։ Ոչ հանրային հատվածում այս տարբերությունը ավելի մեծ է՝ կանայք ստանում են 216,993 դրամ, իսկ տղամարդիկ՝ 359,567 դրամ՝ կազմելով 39.7 տոկոս խզվածք։ Ընդհանուր առմամբ, կանանց միջին ամսական աշխատավարձը կազմում է 202,524 դրամ, ինչը զգալիորեն ցածր է տղամարդկանց միջին աշխատավարձից՝ 341,388 դրամից։ Վերջին տարիներին գենդերային վարձատրության խզվածքը աճել է. 2019 թվականին այն կազմել է 34.7 տոկոս, 2020

[10] ՀՀ վիճակագրական կոմիտե, .«Հայաստանի կանայք և տղամարդիկ 2024 / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե», Armstat.am, 2024, https://armstat.am/am/?nid=82&id=2700.

թվականին՝ 35.1 տոկոս, 2021 թվականին՝ 35.5 տոկոս, 2022 թվականին՝ 39.2 տոկոս, իսկ 2023 թվականին հասել է 40.7 տոկոսի:

2023 թվականի համամետ 2024-ին գործադիր իշխանությունում 12 նախարարություններից 4-ում նախարարի պաշտոն են զբաղեցնում կանայք (48 տոկոսը)[11], իսկ ազգային ժողովում կանանց ներգրավվածությունը կազմել է մոտավորապես 36.4 տոկոս:[12] 2024 թվականի մարտի դրությամբ ՀՀ Ազգային ժողովում կանանց ներգրավվածությունը ղեկավար պաշտոններում շարունակում է մնալ սահմանափակ: Ազգային ժողովի (ԱԺ) երեք փոխնախագահների թվում կանայք բացակայում են, ինչպես նաև կանայք չեն զբաղեցնում խմբակցությունների ղեկավարների և քարտուղարների պաշտոններ: Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովներից միայն երկուսն են կին ղեկավարում, իսկ ԱԺ խորհրդի 15 անդամներից միայն երկուսն են կին: Բացի այդ, ՀՀ ԱԺ նախագահի պաշտոնը երբևէ չի զբաղեցվել կնոջ կողմից: Այս տվյալները վկայում են գենդերային անհավասարության շարունակական գոյության մասին երկրի օրենսդիր մարմնում[13]: Քաղաքական ուժերի ընտրացուցակներում կանանց ընդգրկվածության ցուցանիշը տատանվում է 31-44 տոկոսի սահմաններում:

2023 թվականի դրությամբ կանանց ներկայացվածությունը հանրային քաղաքական և վարչական պաշտոններում շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Կանայք կազմում են համայնքների ավագանիների անդամների 28.5 տոկոսը, իսկ համայնքի ղեկավարների թվում՝ ընդամենը 5.6 տոկոս: Համայնքի ղեկավարի տեղակալների կազմում կանայք ներկայացված են 9.8 տոկոսով, իսկ բնակավայրերի վարչական ղեկավարների թվում՝ 4.9 տոկոսով: Այս ցուցանիշները վկայում են գենդերային անհավասարության առկայության մասին տեղական ինքնակառավարման համակարգում:[14]

ՀՀ դիվանագիտական կորպուսում կանանց ներկայացվածությունը շարունակվում է մնալ սահմանափակ: Կին դեսպանների թիվը երբևէ չի գերազանցել 15 տոկոսը, և կանայք դեռևս չեն զբաղեցրել արտաքին քաղաքականության ոլորտի երեք հիմնական պաշտոններից որևէ մեկը[15]: Ներկայումս ՀՀ դեսպանների 14 տոկոսը

[11] Helix Consulting LLC, "Կառավարություն - Կառուցվածք - Հայաստանի Հանրապետության Կառավարություն," Www.gov.am, 2025, https://www.gov.am/am/structure/.
[12] ՕքսԵՋեն Հիմնադրամ, "Կանանց քաղաքական առաջնորդության խնդիրները Հայաստանում," Oxygen.org.am, 2024, https://oxygen.org.am/havasar2023/page43407766.html.
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում:
[15] OxYGen Foundation, "Research Report on perspectives of Women's Participation in Security and Peace Processes in Armenia" OxYGen Foundation, November 17, 2022, https://oxygen.org.am/wp-content/uploads/2023/03/Research-Report-WEPS_ENG-05.03.2023-final.pdf

կանայք են, սակայն մշտական ներկայացուցիչների թվում կանայք ընդհանրապես չեն ներկայացված[16]: Չնայած դիվանագիտության մեջ կանանց դերի որոշակի աճին, այն դեռևս սահմանափակ է և արտացոլում է նրանց բանակցային գործընթացներում ներգրավվածության պատմականորեն սահմանափակ բնույթը :

ՀՀ-ն 2019 և 2022 թվականներին հաստատել է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ծրագրեր՝ կարևորելով կանանց դերը խաղաղության և անվտանգության ոլորտում: Այնուամենայնիվ, 2022 թվականի ծրագիրը հիմնականում շեշտադրում է կանանց՝ որպես հակամարտության հետևանքները կրող խմբի, մինչդեռ նրանց դերակատարումը խաղաղաշինության և անվտանգության ոլորտում կարող էր ստանալ ավելի լայն ընդգրկում: Կանանց ներգրավվածության բարձրացմանն ուղղված քայլերը կարող են առավել համադրվել պաշտպանությանն ուղղված միջոցառումների հետ՝ ապահովելով նրանց լիարժեք մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Բացի այդ, ԳԱԾ-ը կարող է առավել համապարփակ կերպով անդրադառնալ խոցելի խմբերի՝ հաշմանդամություն ունեցող կանանց, ԼԳԲՏՔ+ անձանց, էթնիկ փոքրամասնությունների, տեղահանված և սահմանային համայնքներում ապրող կանանց առանձնահատուկ մարտահրավերներին: Նրանց համակարգային խոչընդոտների նվազեցումը և ռեսուրսների հասանելիության ապահովումը կարող է ոչ միայն ուժեղացնել սոցիալ-տնտեսական ներառականությունը, այլև խթանել հասարակության կայունությունն ու առաջընթացը: Օրինակ, հաշմանդամություն ունեցող տեղահանված կանանց հարմարեցված աջակցություն տրամադրելը կարող է զգալիորեն բարելավել նրանց մասնակցությունը վերականգնման և խաղաղաշինական գործընթացներին՝ ապահովելով ավելի լայն ներգրավվածություն:

Այս տվյալները վկայում են ոչ միայն գենդերային անհավասարության մասին, այլև դրա խորքային կառուցակարգերի, որոնք ձևավորում են սոցիալական, տնտեսական և քաղաքական խզումներ: Սահմանամերձ համայնքներում այս խզումը հատկապես ընդգծված է, քանի որ կանայք բախվում են ոչ միայն անվտանգային խնդիրներին, այլև համակարգային խոչընդոտներին, որոնք սահմանափակում են նրանց մասնակցությունը խաղաղության գործընթացներին:

[16] Militsa Eggert, "EU4Gender Equality Reform Helpdesk's Support (2021-2024) for Armenia - EU NEIGHBOURS East," EU NEIGHBOURS East, March 11, 2024, https://euneighbourseast.eu/news/publications/eu4gender-equality-reform-helpdesks-support-2021-2024-for-armenia/.

ՀՀ-ում գենդերային անհավասարությունը և սոցիալ-տնտեսական մարտահրավերները խորացնում են կանանց ներգրավվածության պակասը, ինչը դրսևորվում է մի քանի առանցքային խոչընդոտներով.

1. **Տնտեսական խոչընդոտներ** – Կանանց զբաղվածության սահմանափակ հնարավորությունները, անհավասար վարձատրությունը և եկամտի անկախության բացակայությունը խոչընդոտում են նրանց ակտիվ մասնակցությունը քաղաքական և խաղաղաշինական գործընթացներին։

2. **Սոցիալական սահմանափակումներ** – Գենդերային կարծրատիպերը և ավանդական դերաբաժանումը սահմանափակում են կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին՝ հատկապես սահմանամերձ և գյուղական համայնքներում, որտեղ հասարակական կարծիքը հաճախ ավելի պահպանողական է։

3. **Անվտանգային ռիսկեր** – Խաղաղության և անվտանգության ոլորտներում ներգրավված կանայք հաճախ ենթարկվում են թիրախավորված ճնշումների, սպառնալիքների կամ նույնիսկ խտրական վերաբերմունքի, ինչը կարող է նվազեցնել նրանց հնարավորությունները ներգրավվելու բանակցային կամ ռազմավարական որոշումների ընդունման գործընթացներում։

4. **Կրթական և տեղեկատվական սահմանափակումներ** – Քաղաքական և խաղաղության գործընթացների մասին տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը, ինչպես նաև մասնակցության համար պահանջվող հմտությունների զարգացման հնարավորությունների բացակայությունը խոչընդոտում են կանանց՝ ներգրավվելու բանակցային հարթակներում։

5. **Ինստիտուցիոնալ խոչընդոտներ** – Քաղաքական կառույցներում և անվտանգային ինստիտուտներում գենդերային համահավասարության ապահովման մեխանիզմների բացակայությունը կամ թերի իրականացումը թույլ չի տալիս կանանց հավասար հիմունքներով ներգրավվել խաղաղության գործընթացներում և անվտանգության ոլորտում։

Այս բոլոր գործոնները համակցված ձևով խոչընդոտում են կանանց լիարժեք մասնակցությանը, վերարտադրում գենդերային անհավասարությունն ու խորացնում սոցիալական և քաղաքական խզումները, հատկապես առավել խոցելի խմբերի շրջանում։

3.2. Կարիքներ և ընկալումներ

Խաղաղաշինության գործընթացը կարևոր է հատկապես ՀՀ-ում, որտեղ տարածաշրջանային անորոշությունները և հակամարտությունները շարունակական մարտահրավերներ են ստեղծում: Կանայք ունեն յուրահատուկ ներուժ՝ նպաստելու կայուն խաղաղության հաստատմանը, սակայն նրանց մասնակցությունը հաճախ սահմանափակվում է սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական խոչընդոտներով: Տեղական մակարդակում կանանց շրջանում անցկացված ՖԽՔ արդյունքում բացահայտվել են խաղաղության բազմաշերտ ընկալումները, կանանց դերի յուրահատկությունները, առողջության և անվտանգության հետ կապված խնդիրները, ինչպես նաև խոչընդոտները և լուծման ուղիները:

4.3. Խաղաղության բազմաշերտ ընկալումը

ՖԽՔ մասնակիցների հետ իրականացված խորքային քննարկումները բացահայտեցին խաղաղության բարդ և բազմաշերտ էությունը: Քննարկումը ցույց տվեց ցույց տվեց, որ խաղաղությունը միաժամանակ դրսևորվում է երեք փոխկապակցված մակարդակներում՝ անձնական, ընտանեկան և համայնքային:

Անձնական մակարդակում խաղաղությունն ընկալվում է որպես ներքին հոգևոր և հուզական վիճակ:

«Իմ խաղաղությունը նախ և առաջ իմ ներքին ներդաշնակությունն է»,- նշում է մասնակիցներից մեկը:

Այս մակարդակում խաղաղությունը ներառում է մի շարք կարևոր բաղադրիչներ՝ հոգեկան հավասարակշռություն, ինքնաճանաչում և սեփական արժեքային համակարգի հետ ներդաշնակություն: Անձնական խաղաղությունը հանդիսանում է հիմնաքար՝ մյուս մակարդակներում խաղաղություն հաստատելու համար, քանի որ ներքին հավասարակշռություն ունեցող անհատները ավելի հակված են հանդուրժողականության և կառուցողական երկխոսության:

Ընտանեկան մակարդակում խաղաղությունը արտահայտվում է միջանձնային հարաբերությունների որակով և ընտանեկան միջավայրի առողջությամբ:

«Երբ ընտանիքում խաղաղություն կա, դա ազդում է մեր տրամադրության և շրջապատի վրա»,- նշում է մեկ այլ մասնակից:

Այս մակարդակում խաղաղությունը կառուցվում է մի քանի հիմնարար սկզբունքների վրա՝ փոխըմբռնում, հանդուրժողականություն և փոխադարձ հարգանք: Ընտանեկան խաղաղությունը դառնում է կամուրջ անձնական և համայնքային խաղաղության միջև՝ ստեղծելով միկրոմիջավայր, որտեղ յուրաքանչյուր անդամ կարող է զարգանալ և ծաղկել:

Համայնքային մակարդակում խաղաղությունը ձեռք է բերում ավելի լայն, կոլեկտիվ բնույթ:

«Խաղաղությունը համայնքում պետք է լինի բոլորի մասնակցությամբ, այլապես դա միայն ժամանակավոր լուծում կլինի»,- ընդգծում է մասնակիցներից մեկը:

Այս մակարդակում խաղաղությունը պահանջում է համայնքի բոլոր անդամների ակտիվ ներգրավվածություն և համատեղ պատասխանատվություն: Համայնքային խաղաղությունը դրսևորվում է ոչ միայն բացահայտ հակամարտությունների բացակայությամբ, այլև դրական սոցիալական փոխհարաբերությունների առկայությամբ, ներառական որոշումների կայացմամբ և բոլոր անդամների բարօրության նկատմամբ հոգածությամբ:

Մասնակիցների քննարկումները ցույց տվեցին, որ համայնքային խաղաղությունը անմիջականորեն կապված է երկրի ներսում խաղաղության ապահովման և գլոբալ կայունության հետ: Եթե համայնքային մակարդակում ապահովվում են վստահության, համագործակցության և ներգրավվածության մեխանիզմներ, ապա դրանք կարող են նպաստել նաև երկրի ընդհանուր խաղաղության ամրապնդմանը և միջազգային համագործակցության մշակույթի ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, երկրի և գլոբալ մակարդակում հաստատված խաղաղությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ համայնքային խաղաղության համար: Եթե պետությունը վարում է ներառական քաղաքականություն, ապահովում է իրավահավասարություն և ստեղծում է անվտանգ միջավայր, ապա դա հնարավորություն է տալիս համայնքներին զարգացնել խաղաղության և կայունության իրենց մեխանիզմները: Ավելին, միջազգային համագործակցությունը, խաղաղապահ նախաձեռնությունները և հակամարտությունների կարգավորման գլոբալ փորձառությունը կարող են աջակցել տեղական համայնքներին՝ վերացնելով սոցիալական լարվածությունն ու ամրապնդելով խաղաղ փոխհարաբերությունները:

3.4. Կանանց առանձնահատուկ ներդրումը խաղաղաշինության մեջ

Քննարկումները ցույց են տվել կանանց կարևոր ներդրումը խաղաղաշինական գործընթացներում: Այս գործընթացներում կանանց մոտեցումները հատկանշվում են մի շարք կարևոր առանձնահատկություններով: Նախ, կանայք օժտված են կարեկցանքի բարձր մակարդակով, ինչը նրանց թույլ է տալիս խորապես ընկալել հակամարտության տարբեր կողմերի դիրքորոշումները և զգացմունքները: Այս հատկանիշը հատկապես արժեքավոր է միջնորդության և երկխոսության խթանման գործում:

Երկրորդ, կանայք հակված են կոնֆլիկտների կարգավորման ոչ բռնի մեթոդների կիրառմանը: Նրանք առաջնահերթություն են տալիս բանակցություններին և փոխզիջումային լուծումներին, ինչը նպաստում է կայուն խաղաղության հաստատմանը: Երրորդ, կանանց բնորոշ է երկարաժամկետ հեռանկարային մտածողությունը: Նրանք հատուկ ուշադրություն են դարձնում որոշումների երկարաժամկետ ազդեցությանը հաջորդ սերունդների վրա, ինչը կարևոր է կայուն խաղաղության հաստատման համար:

Վերջապես, կանայք ստանձնում են առանցքային դեր առողջապահական և սոցիալական աջակցության կազմակերպման գործում: Հատկապես ճգնաժամային իրավիճակներում նրանք դառնում են համայնքային ռեսուրսների մոբիլիզացման և օգնության ցանցերի ստեղծման առանցքային դերակատարներ: Այս գործունեությունը ոչ միայն օգնում է մեղմել հակամարտության անմիջական հետևանքները, այլև ստեղծում է վստահության և համագործակցության մթնոլորտ՝ նպաստելով երկարաժամկետ խաղաղության հաստատմանը: Այսպիսով, կանայք ոչ միայն կարևոր դերակատարներ են խաղաղաշինության տարբեր փուլերում, այլև այն գործոնը, որը կարող է ապահովել կայունություն և սոցիալական կապերի ամրապնդում:

Կանանց դերը խաղաղաշինական գործընթացներում հաստատված է բազմաթիվ հետազոտություններով, որոնք ընդգծում են նրանց կարեկցանքի բարձր մակարդակը, հակամարտությունների կարգավորման ոչ բռնի մեթոդներին հակված լինելը, երկարաժամկետ մտածողությունը և սոցիալական աջակցության կազմակերպման կարողությունները:

ՄԱԿ-ի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 2020 թվականի զեկույցը ցույց է տալիս, որ կանանց մասնակցությունը խաղաղության բանակցություններին նպաստում է ավելի կայուն և երկարատև համաձայնագրերի ձեռքբերմանը, ինչը

համահունչ է այն դիտարկմանը, որ կանայք առաջնահերթություն են տալիս բանակցություններին և փոխզիջումային լուծումներին[17]: Նմանապես, Քարնեգիի միջազգային խաղաղության հիմնադրամի ուսումնասիրությունները հաստատում են, որ կանայք խաղաղության գործընթացներում մեծ ուշադրություն են դարձնում մարդու իրավունքներին, հաշտեցմանը և սոցիալական արդարությանը, ինչը համընկնում է նրանց՝ համայնքային ռեսուրսների մոբիլիզացման և օգնության ցանցերի ստեղծման առանցքային դերակատարման հետ[18]:

Խաղաղության և ազատության կանանց միջազգային լիգան (WILPF) փաստում է, որ կանանց ներգրավվածությունը խաղաղաշինական գործընթացներում չի սահմանափակվում միայն միջնորդությամբ, այլև ներառում է երկարաժամկետ խաղաղության ռազմավարությունների մշակումը՝ հետևանքների վերլուծության տեսանկյունից:[19] Այս մոտեցումն արտացոլվում է այն դիտարկման մեջ, որ կանայք հատուկ ուշադրություն են դարձնում որոշումների ազդեցությանը հաջորդ սերունդների վրա:

Ջորջթաունի համալսարանի Կանանց, խաղաղության և անվտանգության ինստիտուտի հետազոտությունները ևս հաստատում են, որ կանայք հակված են սոցիալական կապերի ամրապնդմանը, ինչը նպաստում է ոչ միայն խաղաղության հաստատմանն, այլև դրա կայունացմանը: Սա կապվում է այն փաստի հետ, որ կանայք դառնում են վստահության և համագործակցության մթնոլորտի ձևավորման առանցքային գործոններ[20]:

Այսպիսով, ինչպես վկայում են հետազոտությունները, կանայք ոչ միայն կարևոր դերակատարներ են խաղաղաշինության տարբեր փուլերում, այլև այն գործոնը, որը կարող է ապահովել խաղաղ գործընթացների երկարաժամկետ կայունություն և սոցիալական կապերի ամրապնդում:

---

[17] UN Women, "Women, Peace, and Security 2020–2021 Annual Report," UN Women – Headquarters, December 17, 2024, https://www.unwomen.org/en/digital-library/publications/2023/02/women-peace-and-security-2020-2021-annual-report.

[18] Carnegie Corporation, "Tracking War's Disproportionate Impacts on Women | Carnegie Reporter Summer 2024 | Carnegie Corporation of New York," Carnegie Corporation of New York, 2024, https://www.carnegie.org/our-work/article/tracking-wars-disproportionate-impacts-on-women/.

[19] Secretary-General, UN. "Women and Peace and Security :: Report of the Secretary-General." United Nations Digital Library System. UN, September 25, 2020. https://digitallibrary.un.org/record/3888723?ln=en&utm.

[20] GIWPS, "Women, Peace and Security Annual Report 2019–2020," GIWPS, 2019, https://giwps.georgetown.edu/resource/women-peace-and-security-annual-report-2019-2020/.

3.5. Խաղաղության հաստատման համակարգային խոչընդոտները

Խաղաղաշինության գործընթացի արդյունավետությունն ու կայունությունը կախված են բազմաշերտ խնդիրների լուծումից: Սոցիալ-մշակութային կարծրատիպերը և տնտեսական խոչընդոտները, որոնք արդեն անդրադարձվել են, ազդում են նաև առողջապահության և անվտանգության ոլորտների վրա՝ ստեղծելով սերտորեն փոխկապակցված մարտահրավերներ, որոնք կաշկանդում են կանանց մասնակցությունը հասարակական կյանքում և խաղաղության գործընթացներում:

Սոցիալ-մշակութային կարծրատիպերը հանդիսանում են առաջնային խոչընդոտներից մեկը:

«Մեզ ասում են՝ քո գործը տանն է, բայց մենք ուզում ենք, որ մեր ձայնը լսվի»,- նշում է մասնակիցներից մեկը:

Այս կարծրատիպերը խորապես արմատավորված են հասարակական գիտակցության մեջ և դրսևորվում են կյանքի տարբեր ոլորտներում: Դրանք ոչ միայն սահմանափակում են կանանց հնարավորությունները, այլև ձևավորում են ինքնագնահատականի և ինքնարժևորման խնդիրներ:

Տնտեսական անկախության բացակայությունը հանդիսանում է մեկ այլ էական խոչընդոտ:

«Եթե կինն անկախ չէ ֆինանսապես, նրա ձայնը չի լսվում»,- ասում է մեկ այլ մասնակից:

Տնտեսական անկախությունը ոչ միայն ֆինանսական ազատություն է ապահովում, այլև հնարավորություն է տալիս կանանց ավելի ակտիվ դերակատարում ունենալ հասարակական կյանքում: Ֆինանսական կախվածությունը հաճախ դառնում է լռության և անտեսման պատճառ:

Որոշումների կայացման գործընթացներից մեկուսացումը հանդիսանում է համակարգային խնդիր:

«Քաղաքականություն մտնելը կնոջ համար մեծ մարտահրավեր է, որովհետև ոչ միայն հասարակությունն է կարծրատիպերով մոտենում, այլ նաև քաղաքական դաշտում են կանանց ձայնը հաճախ անտեսում," - նշում է ՖԽՔ մեկ այլ մասնակից՝

ընդգծելով խոչընդոտները, որոնց հանդիպում են կանայք՝ մասնակցելու քաղաքական գործընթացներին:

Քաղաքական և հասարակական որոշումների կայացման գործընթացներից կանանց բացառումը հանգեցնում է նրան, որ կարևոր որոշումները հաճախ չեն արտացոլում կանանց հեռանկարները և կարիքները: Սա իր հերթին խոչընդոտում է հավասարակշռված և երկարաժամկետ լուծումների մշակմանը:

Առողջապահության և անվտանգության հետ կապված խնդիրները սահմանամերձ համայնքներում հաճախ դիտարկվում են որպես սոցիալ-տնտեսական անհավասարության և համակարգային բացերի արտահայտություն: Տնտեսական կախվածությունը ոչ միայն սահմանափակում է կանանց մասնակցությունը հասարակական կյանքին, այլև նվազեցնում է նրանց հասանելիությունը առողջապահական և անվտանգության միջոցներին: Այս մարտահրավերներն ավելի են սրվում սահմանամերձ բնակավայրերում, որտեղ կանայք առնչվում են անմիջական ռազմական սպառնալիքների և առողջապահական ծառայությունների պակասի հետ:

ՖԽՔ մասնակիցները նշում են, որ առողջությունը հանդիսանում է խաղաղության կարևոր բաղադրիչ: Սահմանամերձ համայնքներում կանայք հաճախ բախվում են առողջապահական ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրներին:

«Եթե առողջություն չկա, ոչ մի բան հնարավոր չէ անել, ոչ ընտանիքի համար, ոչ համայնքի»,- ասում է մասնակիցներից մեկը:

Սահմանամերձ շրջաններում առողջապահական ծառայությունների մատչելիությունը շարունակում է մնալ առանցքային մարտահրավեր: Բժշկական կենտրոնները հաճախ գտնվում են հեռավոր վայրերում, իսկ տեղական բուժկետերը չունեն բավարար սարքավորումներ և մասնագետներ՝ համայնքի բնակիչների կարիքները լիարժեք բավարարելու համար:

Հատկապես անհանգստացնող է հոգեբանական աջակցության պակասը: Պատերազմական իրավիճակներում և հետպատերազմյան շրջանում հոգեբանական օգնությունը դառնում է կենսական անհրաժեշտություն:

«Տրավմայի հետ աշխատանքը շատ կարևոր է, բայց մեր համայնքում հոգեբանական աջակցությունը հասանելի չէ: Շատ կանայք ուղղակի չեն դիմում,

քանի որ չգիտեն՝ որտեղից սկսել կամ չեն վստահում ծառայություններին», - նշում է ՖԽՔ մի մասնակից՝ ընդգծելով հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը, հատկապես հակամարտությունից տուժած համայնքներում:

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչները, հատկապես կանայք և երեխաները, որոնք անմիջականորեն առնչվում են հակամարտության հետևանքների հետ, կարիք ունեն մասնագիտական հոգեբանական աջակցության՝ տրավմատիկ փորձառությունները հաղթահարելու և հոգեկան առողջությունը պահպանելու համար: Այս ծառայությունների բացակայությունը խոչընդոտում է ոչ միայն անհատների, այլև ամբողջ համայնքի առողջ վերականգնմանն ու զարգացմանը:

3.6. Անվտանգության հետ կապված մարտահրավերներ

Կանայք շեշտում են անվտանգության զգացողության կարևորությունը իրենց կյանքում:

«Մեր երեխաների անվտանգությունը ամենակարևորն է: Երբ վտանգ կա, մենք չենք կարող մտածել ոչ մի բանի մասին»,- նշում է մեկ այլ մասնակից:

Սահմանամերձ համայնքներում բնակվող կանանց առօրյան անբաժանելի է դարձել անվտանգության մշտական մարտահրավերներից: Ռազմական սպառնալիքները ոչ միայն ֆիզիկական վտանգ են ներկայացնում, այլև խորը հոգեբանական ազդեցություն են թողնում ընտանիքների վրա: Մշտական լարվածությունը և անորոշությունը խաթարում են առօրյա կյանքի բնականոն ընթացքը՝ սկսած երեխաների կրթությունից մինչև տնտեսական գործունեություն:

Անվտանգության բացակայությունը լուրջ խոչընդոտ է դարձել կանանց հասարակական ակտիվության համար: Խաղաղաշինական գործընթացներում կանանց ձայնը կենսական նշանակություն ունի, սակայն ներկա պայմաններում նրանք հաճախ ստիպված են լինում առաջնահերթությունը տալ ընտանիքի անվտանգության ապահովմանը: Սա հանգեցնում է նրան, որ համայնքային որոշումների կայացման գործընթացներում կանանց տեսակետները և կարիքները բավարար չափով ներկայացված չեն: Միևնույն ժամանակ, հենց կանայք են, որ հաճախ ունենում են արժեքավոր գաղափարներ և առաջարկներ խաղաղության հաստատման և համայնքային զարգացման վերաբերյալ: Անվտանգ միջավայրի ստեղծումը ոչ միայն կբարելավի ընտանիքների կյանքի որակը, այլև կընդլայնի

կանանց մասնակցությունը հասարակական կյանքում՝ նպաստելով ավելի կայուն և ներառական համայնքների ձևավորմանը:

Այս բոլոր խոչընդոտները փոխկապակցված են և ստեղծում են բարդ համակարգային խնդիր: Կարծրատիպերը հանգեցնում են տնտեսական անհավասարության, որն էլ իր հերթին սահմանափակում է առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները: Միաժամանակ, որոշումների կայացման գործընթացներից մեկուսացումը խոչընդոտում է այս խնդիրների համակարգային լուծմանը: Այս շղթան խզելու համար անհրաժեշտ է համալիր մոտեցում, որը կհասցեագրի բոլոր նշված խոչընդոտները միաժամանակ:

3.7. Խաղաղաշինության գործընթացներում խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքները

Խոցելի խմբերի, ինչպես հաշմանդամություն ունեցող կանանց և տեղահանված անձանց խնդիրների լուծումը կարիք ունի հատուկ ուշադրության՝ ընդհանուր խաղաղության գործընթացի հաջողությունը ապահովելու համար:

Խաղաղաշինության գործընթացներում կանանց փորձառությունները զգալիորեն տարբերվում են՝ կախված նրանց սոցիալական դիրքից, ֆիզիկական կարողություններից և տնտեսական հնարավորություններից: Հատկապես մտահոգիչ է հաշմանդամություն ունեցող կանանց, տեղահանված անձանց և սոցիալապես անապահով խմբերի իրավիճակը, որոնց խնդիրները հակամարտության պայմաններում էլ ավելի են սրվում:

Հաշմանդամություն ունեցող կանայք հակամարտության ընթացքում հայտնվում են առանձնակի խոցելի իրավիճակում:

«Բոլոր ծրագրերը կարծես նախատեսված են նրանց համար, ովքեր կարողանում են ազատ տեղաշարժվել, իսկ մենք չենք ընդգրկվում ոչ մի նախաձեռնությունում», - նշում է հաշմանդամություն ունեցող կին՝ մատնանշելով իրենց ֆիզիկական կարիքների անտեսումը:

Նրանց առջև ծառացած մարտահրավերները հաճախ դուրս են մնում խաղաղաշինական գործընթացների օրակարգից: Այս կանայք բախվում են բազմաթիվ խոչընդոտների՝ սկսած տեղաշարժման սահմանափակումներից մինչև բժշկական օգնության անմատչելիություն: Հակամարտության պայմաններում նրանց անվտանգության ապահովումը դառնում է առավել բարդ խնդիր, քանի որ

գոյություն ունեցող արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները հաճախ հաշվի չեն առնում հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները:

Տնտեսական խոցելիությունը էականորեն սահմանափակում է կանանց՝ իրենց անվտանգությունն ապահովելու հնարավորությունները: Սոցիալապես անապահով կանայք հաճախ չունեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ վտանգի պարագայում անվտանգ վայր տեղափոխվելու կամ ապաստան գտնելու համար: Ինչպես նշում է ՖԽՔ մասնակիցներից մեկը.

«Եթե մեքենա չունես, ինչպե՞ս փախչես վտանգից: Իսկ եթե գումար չունես, չես կարող ապահով ապաստարան գտնել»:

Այս իրավիճակը ցույց է տալիս, թե ինչպես են տնտեսական անհավասարությունները վերածվում անվտանգության սպառնալիքների հակամարտության պայմաններում:

«Երբ քեզ ֆինանսապես չեն աջակցում, դու չես կարող լինել անկախ և պաշտպանել քո շահերը: Մենք պարզապես գոյատևում ենք», - ասում է ՖԽՔ մի մասնակից՝ անդրադառնալով տնտեսական անհավասարությանը:

Տեղահանված կանանց իրավիճակը առանձնանում է իր բարդությամբ և բազմաշերտությամբ:

«Մենք կորցրել ենք մեր տները, աշխատանքը, և անգամ մեր համայնքի կապերը: Եթե մենք նույնիսկ խոսում ենք, մեզ լսող չկա», - նշում է մեկ այլ տեղահանված կին՝ ընդգծելով սոցիալական անջատվածության խնդիրը:

Պատերազմական գործողությունների հետևանքով իրենց բնակավայրերը լքած կանայք կանգնում են մի շարք հիմնախնդիրների առջև՝ մշտական կացարանի բացակայություն, աշխատանքի կորուստ, սոցիալական կապերի խզում: Խաղաղության բանակցություններում նրանց ձայնը հաճախ անտեսվում է, չնայած նրան, որ հենց նրանք են կրում տեղահանման ամենածանր հետևանքները: Այս իրավիճակը խոչընդոտում է կայուն խաղաղության հաստատմանը, քանի որ տեղահանված անձանց կարիքների անտեսումը կարող է հանգեցնել նոր սոցիալական լարվածությունների:

Խաղաղաշինական գործընթացներում կանայք ունեն յուրահատուկ ներուժ՝ շնորհիվ իրենց կարեկցանքի, կոնֆլիկտների խաղաղ կարգավորման

նախընտրության և երկարաժամկետ մտածողության։ Սակայն նրանց մասնակցությունը խոչընդոտվում է սոցիալ-մշակութային կարծրատիպերով, տնտեսական կախվածությամբ և անվտանգության մարտահրավերներով։

Հատկապես խոցելի խմբերի համար իրավիճակն առավել բարդ է։ Հաշմանդամություն ունեցող կանայք, սոցիալապես անապահով խմբերը, ինչպես նաև տեղահանված կանայք բախվում են լրացուցիչ մարտահրավերների, որոնք ներառում են առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիություն, անվտանգության ապահովման խնդիրներ և առօրյա կենսապահովման դժվարություններ։

Բացի այդ, սոցիալական, ֆիզիկական և տնտեսական խոցելիության պատճառով այս խմբերի ներկայացուցիչները հաճախ չունեն հնարավորություն ձեռք բերելու այնպիսի բազային կյանքի հմտություններ, որոնք կարող են ապահովել նրանց ինքնուրույնությունն ու անվտանգությունը։ Մեքենա վարելու, ինքնապաշտպանության կամ առաջին բուժօգնության տրամադրման հմտությունների բացակայությունը

IV. Միջազգային փորձ

4.1. Կոլումբիայի օրինակը

4.1.1. Նախապատմություն և համատեքստ

Կոլումբիայի ներքին հակամարտությունը, որը տևել է ավելի քան 60 տարի, ներառել է բազմաթիվ դերակատարների՝ քաղաքական կուսակցություններ, զինված ապստամբական խմբավորումներ, վիճահարույց զինված խմբեր, հանցավոր խմբավորումներ և քաղաքային խմբեր: Մինչև 2016 թվականի խաղաղության համաձայնագիրը, նախկին խաղաղության գործընթացները չեն ներառել գենդերային հեռանկար: 2016 թվականի համաձայնագիրը դարձավ առաջին փաստաթուղթը, որն ընդունեց հավասարության, խտրականության բացառման և կանանց իրավունքների սկզբունքները որպես առանցքային ուղենիշներ:

Այս երկարատև և բարդ հակամարտության մարդկային ծավալն ու ազդեցությունը հասարակության տարբեր շերտերի վրա արտացոլվում է վիճակագրական տվյալներում, որոնք բացահայտում են ներգրավված էին բազմաթիվ զինված խմբավորումներ, որոնցում կանանց մասնակցությունը զգալի էր. կանայք կազմում էին Կոլումբիայի հեղափոխական զինված ուժերի - Ժողովրդական բանակ - ուժերի (Fuerzas Armadas Revolucionarias de Colombia - Ejército del Pueblo (FARC-EP)) մոտ 40 տոկոսը և Կոլումբիայի ազգային ազատագրության բանակի (Ejército de Liberación Nacional (ELN)) - մարտիկների 25-33 տոկոսը[21]:

4.1.2. Հակամարտության ազդեցությունը

Հակամարտության ազդեցությունը տարբեր է կանանց և տղամարդկանց համար: Գրանցված տեղահանված անձանց 39 տոկոսը կանայք էին, 35 տոկոսը՝ տղամարդիկ, մնացած մասը՝ երեխաներ: Ներքին տեղահանված անձանց ճնշող մեծամասնությունը՝ 97 տոկոսը, ապրում է աղքատության շեմից ցածր: Սեռական բռնության գրանցված զոհերի 80 տոկոսը կանայք էին: Հատկապես ծանր էր իրավիճակը հակամարտության գոտիներում, օրինակ՝ Պուտումայոյում, որտեղ յուրաքանչյուր տասներորդ կինը դարձել է այրի, իսկ կանանց 62 տոկոսը կորցրել է միջինում երկու երեխա[22]:

Տնտեսական հետևանքները նույնպես անհավասարաչափ էին բաշխված: Չնայած կանայք կազմում են բնակչության 52.8 տոկոսը, նրանք զբաղեցնում են վճարովի աշխատատեղերի միայն 44 տոկոսը: Ղեկավար պաշտոններում տղամարդիկ երկու անգամ գերազանցում են կանանց: Հակամարտության գոտիներում կանանց

[21] UN Women, "GENDER and the ROLE of WOMEN in COLOMBIA'S PEACE PROCESS," 2016, https://www.usip.org/sites/default/files/Gender-and-the-Role-of-Women-in-Colombia-s-Peace-Process-English.pdf.
[22] Նույն տեղում:

գլխավորությամբ տնային տնտեսությունները ցույց են տալիս 26 տոկոսով ավելի ցածր եկամուտ, իսկ կանանց աշխատուժի մասնակցությունը նվազել է 31տոկոսով:

4.1.3. Ինստիտուցիոնալ արձագանքն ու բարեփոխումները

2013 թվականին կառավարությունը կատարեց պատմական քայլ՝ նշանակելով երկու կին լիազոր բանակցող: Կոնգրեսում կանանց մասնակցությունն աճել է՝ հասնելով Ներկայացուցիչների պալատում 19 տոկոսի և Սենատում 22.5 տոկոսի: Սակայն տեղական մակարդակում ներկայացվածությունը դեռևս մնում է ցածր՝ քաղաքապետերի աթոռների 9.8 տոկոսը և նահանգապետերի 6.25 տոկոսը: Զինաթափման գործընթացում 1999-2015թթ. ընթացքում 5,708 անչափահաս է զինաթափվել, որոնց 29 տոկոսը կանայք էին[23]:

Օրենսդրական բարեփոխումները զգալի ազդեցություն են ունեցել: 2008 թվականի 1257 օրենքը հանգեցրել է գենդերային բռնության հաղորդված դեպքերի 35 տոկոս աճի, մինչդեռ 2014 թվականի 1719 օրենքը բարելավել է հակամարտության հետ կապված սեռական բռնության դեպքերի քրեական հետապնդման ցուցանիշները 42 տոկոսով: Զոհերի և հողի վերականգնման օրենքի շրջանակներում կանանց հողային հայցերի 60 տոկոսը հաջողությամբ լուծվել է[24]:

Ինստիտուցիոնալ մակարդակում նշանակալի առաջընթաց է գրանցվել: Գենդերային ենթահանձնաժողովի ստեղծումը հանգեցրել է խաղաղության համաձայնագրի դրույթների ամբողջական վերանայման: Խաղաղության բանակցություններին զոհերի պատվիրակությունների 60-տոկոսը կանայք էին: Խաղաղության հարցերով բարձր հանձնակատարի գրասենյակի աշխատակազմի 80 տոկոսը և Կոլումբիայի վերաինտեգրման գործակալության աշխատակազմի 57 տոկոսը կանայք են[25]:

4.1.4. Քաղաքացիական հասարակության դերը խաղաղության բանակցություններում

Կոլումբիայի կառավարության և Կոլումբիայի Հեղափոխական Զինված Ուժերի (FARC) միջև խաղաղության բանակցությունների ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցությունը վճռորոշ դեր է խաղացել: Զոհերի պատվիրակությունների, կանանց խմբերի և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների ներգրավումը հարստացրել է երկխոսությունները՝ ապահովելով տարբեր տեսակետների հաշվառումը: Այս մասնակցությունը ոչ

[23] Նույն տեղում
[24] Նույն տեղում
[25] Նույն տեղում

միայն օրինականացրել է գործընթացը, այլև նպաստել է մարդու իրավունքների և սոցիալական արդարության հարցերի ներառմանը համաձայնագրերում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ակտիվորեն պաշտպանել են խաղաղության համաձայնագրերի լիարժեք իրականացումը: Նրանք վերահսկում են համապատասխանությունը, հաղորդում են մարդու իրավունքների խախտումների մասին և հաշվետու են պահում թե՛ կառավարությանը, թե՛ նախկին զինյալներին: Օրինակ՝ Ժողովրդական կրթության և հետազոտության կենտրոնը (CINEP/PPP) փաստագրում է մարդու իրավունքների խախտումները և աջակցում համայնքներին իրենց իրավունքները պաշտպանելու հարցում[26]:

4.1.5. Համայնքային մակարդակի խաղաղաշինություն

Տեղական մակարդակում քաղաքացիական հասարակությունը նախաձեռնել է խաղաղաշինական ջանքեր՝ տեղական հակամարտությունները լուծելու և հաշտեցումը խթանելու համար: Դրա վառ օրինակ է 2022 թվականին հիմնադրված Mesa de Diálogo del Norte del Cauca-ն, որը միավորում է բնիկ, աֆրո-սերունդ, գյուղացիական համայնքներին և ագրոարդյունաբերությանը՝ երկխոսության միջոցով պատմական հողային վեճերը լուծելու համար[27]: Այս նախաձեռնությունը հանգեցրել է շոշափելի արդյունքների, ինչպիսիք են հողի բաշխումը և հարյուրավոր ընտանիքների օգուտ բերող կայուն տնտեսական նախագծերի մշակումը:

4.1.6. Մարտահրավերներ և շարունակական ջանքեր

Չնայած այս ներդրումներին, քաղաքացիական հասարակությունը բախվում է զգալի մարտահրավերների, ներառյալ ակտիվիստների դեմ սպառնալիքները և սահմանափակ ռեսուրսները: Որոշ շրջաններում բռնության շարունակականությունը ընդգծում է քաղաքացիական հասարակության շարունակական ներգրավվածության անհրաժեշտությունը՝ հիմնարար խնդիրները լուծելու և համապարփակ խաղաղություն հաստատելու համար: Կառավարության «Ամբողջական խաղաղության» քաղաքականությունը շեշտադրում է քաղաքացիների մասնակցությունը, և ՔՀԿ-ները ակտիվորեն ներգրավված են խաղաղության նախաձեռնությունների ձևավորման և իրականացման մեջ՝ ապահովելու համար, որ դրանք արտացոլեն տուժած համայնքների կարիքները և ձգտումները:

[26] https://www.jesuits.global/2023/06/26/cinep-ppp-of-colombia-more-than-just-a-long-acronym/
[27] One Peace through Participation: The Colombian Experience, https://doi.org/10.1332/policypress/9781529229981.003.0002

Կոլումբիայի խաղաղության համաձայնագիրը հաճախ նշվում է որպես ընդգրկուն և մասնակցային բանակցային գործընթացի հաջող օրինակ: Այն առանձնանում է հատկապես իր ընդգծված ներառական մոտեցմամբ, որի շրջանակում կանայք ոչ միայն ներգրավվել են բանակցություններում, այլև մեծապես նպաստել են խաղաղության պայմանագրի մշակմանը՝ ապահովելով, որ այն անդրադառնա սեռական բռնության, հողային իրավունքների և սոցիալական արդարադատության հարցերին: Կոլումբիայի օրինակն ընդգծում է, թե որքան կարևոր է խաղաղաշինական գործընթացներում տարբեր սոցիալական խմբերի ներկայացվածությունը՝ ապահովելու կայուն և արդարացի լուծումներ:

V. Եզրակացություն եւ առաջարկություններ

ՀՀ-ում խաղաղաշինական գործընթացներում կանանց դերի ընդլայնումը պահանջում է համալիր և համակարգված մոտեցում՝ հիմնված գենդերային հավասարության և ներառականության սկզբունքների վրա: Կանանց ակտիվ մասնակցությունը հնարավորություն է ստեղծում կայուն և երկարատև խաղաղության համար՝ համայնքային, ազգային և միջազգային մակարդակներում: Հաջողության հասնելու համար անհրաժեշտ է խթանել համագործակցությունը պետական, համայնքային և միջազգային գործընկերների միջև, ինչպես նաև ներգրավել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ ապահովելով շարունակական մշտադիտարկում և արդյունավետության գնահատում:

Կանանց ներգրավվածությունը խաղաղության հաստատման գործընթացներում ոչ միայն խթանում է կայունությունը, այլև ապահովում է ներառական քաղաքականության մշակումն ու արդյունավետությունը: Չնայած, ներառականության ապահովմանն ուղղված ՀՀ ջանքերի, կանանց ներգրավվածությունը խաղաղաշինական գործընթացներում (այդ թվում նաև անվտանգային ու դիվանագիտական կառույցներում) դեռևս ցածր է:

Հիմնվելով փաստաթղթում ամփոփված տվյալների վերլուծության և բացահայտված կարիքների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության վրա, առաջարկվում է առաջարկությունների համապարփակ շրջանակ՝ տարբեր խմբերի կանանց խաղաղաշինական գործընթացներում ակտիվ մասնակցությունը խթանելու համար: Առաջարկությունները ընդգրկում են հստակ և գործնական մեխանիզմներ, որոնք պետք է ներառվեն պետական ռազմավարությունների և ծրագրերի մեջ՝ ապահովելով կանանց լիարժեք մասնակցությունը խաղաղության, անվտանգության, տնտեսական զարգացման և կրթական նախաձեռնություններում:

Ներքոնշյալ առաջարկությունները նպատակ ունեն ոչ միայն խթանել կանանց ներգրավվածությունը խաղաղության և կայունության հաստատման գործընթացներում, այլև ապահովել նրանց հատուկ կարիքների հասցեագրումը:

Առաջարկություն 1 - Կանանց ներկայացվածության ավելացում որոշումների կայացման գործընթացներում, մասնավորապես անվտանգային, դիվանագիտական ու խաղաղաշինական ոլորտներում

Նպատակ

Խթանել կանանց մասնակցությունը անվտանգության, դիվանագիտության և խաղաղաշինության ոլորտներում, ապահովելով նրանց ներգրավվածությունը խաղաղության քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում:

Կարճաժամկետ առաջարկություններ (1-2 տարի)

Վերանայել և փոփոխություններ կատարել ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում, ամրագրելով կանանց ընդգրկվածության բարձրացման մեխանիզմներ պաշտպանական, անվտանգային և խաղաղաշինական կառույցներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Պաշտպանության նախարարություն (ՊՆ) – քաղաքականության կիրառում
- ՀՀ Արտաքին գործերի նախարարություն (ԱԳՆ) – դիվանագիտական կորպուսում փոփոխությունների ապահովում

Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) զարգացման ծրագրերում ընդգրկել կանանց դերի ընդլայնումը, ինչը կնպաստի համայնքային մակարդակում նրանց ներգրավվածությանը խաղաղաշինական նախաձեռնություններում:

Իրականացնող մարմիններ

- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ) – ծրագրերի մշակում
- ՏԻՄ-եր – համայնքային մակարդակում իրականացում

Դիվանագիտական ծառայության բարեփոխումների շրջանակում ստեղծել կանանց ընդգրկվածության խթանման մեխանիզմներ, ինչը կնպաստի նրանց դերի մեծացմանը խաղաղ բանակցություններում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ԱԳՆ – քաղաքականության մշակում
- ՀՀ Դիվանագիտական դպրոց – վերապատրաստման ծրագրերի իրականացում

Միջնաժամկետ առաջարկություններ (3-5 տարի)

Խաղաղաշինական հանձնաժողովներում կանանց ներգրավման մեխանիզմների ամրապնդում, ապահովելով ավելի բարձր մասնակցություն պաշտպանական և անվտանգության ոլորտներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Ազգային ժողով – օրենսդրական ապահովում
- ՀՀ կառավարություն – ռազմավարությունների ընդունում

ՏԻՄ-երում կանանց առաջնորդության խթանում, ամրագրելով քաղաքական և ծրագրային մեխանիզմներ, որոնք կնպաստեն նրանց ներգրավվածության խորացմանը:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ՏԿԵՆ – համայնքային զարգացման ծրագրեր
- Մարզպետարաններ – վերահսկողություն

Իրականացնող մարմիններ

- ԱԳՆ – դիվանագիտական ծառայության բարեփոխում
- ԵՄ, ՄԱԿ Կանայք – վերապատրաստման և միջազգային փորձի փոխանակման աջակցություն

Երկարաժամկետ առաջարկություններ (6-10 տարի)

Երկարաժամկետ տեսանկյունից ապահովել կանանց առնվազն 30 տոկոս ներկայացվածությունը ազգային անվտանգության և խաղաղության կառույցներում (Ազգային անվտանգության խորհուրդ, ՊՆ, ԱԳՆ), ինչպես նաև դիվանագիտական կորպուսում՝ խաղաղապահ առաքելություններում և արտաքին քաղաքականության մշակման մեջ: ՏԻՄ-երում և մարզային կառույցներում առաջարկվում է կանանց ղեկավար պաշտոններում ներկայացվածությունն ու մասնակցության հասցնել 50 տոկոսի (ՏԿԵՆ, ՏԻՄ-եր, մարզպետարաններ):

Վերանայման կարիք ունեցող փաստաթղթեր

- ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն
- ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի 2026-2030 ռազմավարություն (հստակ գործողություններ կանանց ներգրավման մեխանիզմների համար)
- ՀՀ Զինված ուժերի բարեփոխումների ծրագիր (ՊՆ-ի շրջանակներում խաղաղապահ առաքելություններում կանանց ընդգրկման ինստիտուցիոնալ մեխանիզմներ)
- ՀՀ Դիվանագիտական ծառայության բարեփոխման ռազմավարություն (ԱԳՆ-ում կանանց դերի ընդլայնում)
- ՀՀ Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման զարգացման ռազմավարություն (կանանց մասնակցության բարձրացում մարզային և համայնքային կառավարման մակարդակներում)

Առաջարկություն 2 - Կանանց տնտեսական հզորացում և խաղաղաշինական գործընթացներում նրանց մասնակցության խթանում տնտեսական մեխանիզմների միջոցով:

Նպատակ

Խթանել կանանց տնտեսական հզորացումը, մասնավորապես հակամարտությունից տուժած կանանց համար, որպեսզի նրանք կարողանան ակտիվ մասնակցություն ունենալ խաղաղաշինական գործընթացներում:

Կարճաժամկետ առաջարկություններ (1-2 տարի)

ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերում ներառել կանանց տնտեսական աջակցության մեխանիզմներ՝ խթանելով նրանց ֆինանսական անկախությունը:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն – կանանց ձեռներեցության և ֆինանսական աջակցության ծրագրերի մշակում
- Հայաստանի Զարգացման հիմնադրամ – գործարարության աջակցություն

Աշխատանքի շուկայում կանանց ներգրավվածության խթանում, ապահովելով նրանց զբաղվածության ընդլայնումը խաղաղաշինական և վերականգնողական ոլորտներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - զբաղվածության և վերապատրաստման ծրագրերի մշակում իրականացում
- ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) - միջազգային աջակցություն և ֆինանսավորում

Միջնաժամկետ առաջարկություններ (3-5 տարի)

Տեղահանված կանանց համար տնտեսական աջակցության ծրագրերի մշակում, ապահովելով նրանց մասնակցությունը ձեռնարկատիրական և բիզնես ոլորտներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - զբաղվածության և վերապատրաստման ծրագրերի մշակում իրականացում
- ՀՀ ՏԿԵՆ - ՏԻՄ-երի տնտեսական ծրագրերում կանանց ներգրավման խթանում
- Միջազգային դոնոր կազմակերպություններ (ԵՄ, ՄԱԶԾ, ԵԱՀԿ) – ծրագրային և ֆինանսական աջակցություն

ՏԻՄ-երի տնտեսական զարգացման ծրագրերում կանանց ձեռներեցության խթանում, ինչը կնպաստի տեղական համայնքների կայուն զարգացմանը:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ՏԿԵՆ - քաղաքականության մշակում և տեղական ծրագրերի համակարգում
- Համայնքային կառույցներ - համայնքային մակարդակում ծրագրերի իրականացում

Երկարաժամկետ առաջարկություններ (6-10 տարի)

ՏԻՄ-երում կանանց տնտեսական ծրագրերի խթանում, ապահովելով կանանց սոցիալ-տնտեսական զարգացման շարունակականությունը:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ կառավարություն - ընդհանուր ռազմավարական քաղաքականության մշակում և վերահսկողություն
- ՀՀ ՏԿԵՆ - քաղաքականության մշակում և տեղական ծրագրերի իրականացում և վերահսկում

Կանանց տնտեսական մասնակցության խթանման կայուն մեխանիզմների ստեղծում, որը կապահովի նրանց հավասար հնարավորությունները ձեռնարկատիրական և զբաղվածության ոլորտներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն - ձեռներեցության և զբաղվածության ծրագրերի մշակման ապահովում
- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - կանանց տնտեսական մասնակցության հնարավորությունների ընդլայնում

Առաջարկություն 3 - Կրթության և վերապատրաստման մեխանիզմների ներդրում խաղաղաշինական ոլորտում կանանց կարողությունների զարգացման համար:

Նպատակ

Ապահովել կանանց խաղաղաշինական և առաջնորդության կարողությունների զարգացումը, ստեղծելով կրթական ու վերապատրաստման համակարգված ծրագրեր:

Կարճաժամկետ առաջարկություններ (1-2 տարի)

ՀՀ բուհերում խաղաղաշինության կրթական ծրագրերի ներդրում, ապահովելով կանանց ներգրավվածությունը այս ոլորտում:
Իրականացնող մարմիններ

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ն ախարարություն (ԿԳՄՍ) - խաղաղաշինության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ապահովում

- Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), ՀՀ Պետական կառավարման ակադեմիա - ակադեմիական ծրագրերի մշակում և դասընթացների կազմակերպում

Խաղաղաշինական ոլորտում վերապատրաստման հնարավորությունների ընդլայնում, նպաստելով մասնագիտական զարգացմանը:

- ՀՀ ԱԳՆ, ՊՆ - դիվանագիտական և անվտանգության ոլորտում վերապատրաստման ծրագրերի իրականացում
- ՄԱԿ Կանայք - միջազգային գործընկերների ներգրավում, փորձի փոխանակում և ֆինանսավորում

Միջնաժամկետ առաջարկություններ (3-5 տարի)

Կանանց ներգրավման խթանում բանակցային գործընթացներում՝ վերապատրաստման միջոցով:

- Առաջնորդության հմտությունների զարգացում
- Բանակցային տեխնիկա և հակամարտությունների խաղաղ կարգավորում
- Կանանց դերը խաղաղաշինության գործընթացներում

Իրականացնել աշխատաժողովներ և դասընթացներ՝ ներառելով թե՛ տեսական, թե՛ գործնական բաղադրիչներ, ապահովելով աշխարհագրական ընդգրկվածություն հանրապետության մասշտաբով: Թիրախ կանանց ընտրությունը կատարել՝ հաշվի առնելով նրանց ներգրավվածությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում՝ այդպիսով խթանելով նրանց ազդեցությունը տեղական մակարդակում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ԿԳՄՍ նախարարություն - խաղաղաշինության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ապահովում
- ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, ԵՊՀ - դասընթացների կազմակերպում
- Միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ Կանայք, ԵՄ, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր) - միջազգային գործընկերների ներգրավում, փորձի փոխանակում և ֆինանսավորում
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ - վերապատրաստման ծրագրերի իրականացում, փորձի փոխանցում և քաղաքականության մշակման աջակցություն

Դասընթացավարների պատրաստման ծրագիր, որի նպատակն է պատրաստել մասնագետներ՝ խաղաղաշինության և գենդերային զգայունության թեմաներով դասընթացներ վարելու համար:

Ծրագիրը պետք է ներառի՝

- Խորացված տեսական պատրաստություն
- Գործնական հմտությունների զարգացում
- Փորձնական դասընթացների անցկացում փորձառու մենթորների վերահսկողությամբ
- Որակավորման գնահատում և հավաստագրում

Գիտելիքի փոխանցման շարունակականությունը ապահովելու համար՝ աջակցել դասընթացավարներին հետագա երկու տարիների ընթացքում անցկացնել դասընթացներ մարզերում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ԿԳՄՍ նախարարություն - խաղաղաշինության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ապահովում
- Բուհեր - խաղաղաշինության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ապահովում
- Միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ Կանայք, ԵՄ, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր) - միջազգային գործընկերների ներգրավում, փորձի փոխանակում և ֆինանսավորում

Երկարաժամկետ առաջարկություններ (6-10 տարի)

Կրթական բարեփոխումների ծրագրի շրջանակներում խաղաղաշինության թեմաների ներդրում ՀՀ բուհերում և հանրակրթական դպրոցներում:

Իրականացնող մարմիններ

- ՀՀ ԿԳՄՍ նախարարություն - խաղաղաշինության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ապահովում
- ԵՄ, Եվրոպայի խորհուրդ (ԵԽ) – փորձագիտական և ֆինանսական աջակցությունկրթական ծրագրերի մշակման համար

Երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է նախատեսել խաղաղաշինական կրթության համալիր ներդրումը ՀՀ բոլոր բուհերում և հանրապետության դպրոցներում՝ ապահովելով ուսանողների և աշակերտների մոտ խաղաղության մշակույթի, բանակցությունների հմտությունների և կոնֆլիկտների խաղաղ կարգավորման սկզբունքների ձևավորում: Այս նախաձեռնությունը պետք է ուղղված լինի քաղաքացիական գիտակցության զարգացմանը և խաղաղաշինական գործընթացներում ապագա մասնագետների պատրաստմանը:

Վերանայման/մշակման կարիք ունեցող փաստաթղթեր

- ՀՀ Կրթության ոլորտի ռազմավարություն (համակարգային խաղաղաշինական կրթական ծրագրերի ներդրում)
- ՀՀ Բարձրագույն կրթության զարգացման ծրագիր (խաղաղաշինության մոդուլների ինտեգրում բուհերում)
- ՀՀ Կառավարման ակադեմիայի վերապատրաստման ծրագրեր (հատուկ բաղադրիչ՝ կանանց խաղաղաշինական մասնակցության վերապատրաստման համար)
- ՀՀ Երիտասարդական քաղաքականության մասին օրենք և դրանից բխող գործողությունների ծրագիր

Այլ առաջարկություններ

Համայնքային մակարդակում խաղաղաշինական նախաձեռնությունների ինստիտուցիոնալացում

Համայնքային երկխոսության հարթակների ձևավորում - Համայնքներում կանանց դերի բարձրացման և խաղաղաշինական գործընթացներում նրանց ակտիվ մասնակցության խթանման նպատակով ներդնել երկխոսությունների համակարգ: Երկխոսության հանդիպումները կազմակերպել ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում: Հանդիպումների թեմատիկ շրջանակը պետք է ներառի՝

- Համայնքային խաղաղության կառուցման գործում կանանց դերի քննարկում
- Տեղական մակարդակում կոնֆլիկտների կանխարգելման և լուծման մեխանիզմների մշակում
- Միջհամայնքային համագործակցության հնարավորությունների բացահայտում
- Կանանց տնտեսական հզորացման ուղիների որոշում

Ծրագրի արդյունավետ իրականացման համար մշակել հստակ ցուցանիշներ և գնահատման չափորոշիչներ:

Տրավմայի հաղթահարում և հոգեբանական աջակցության ծառայություններ

- Ներդնել տրավմայի հաղթահարման ծառայություններ և ապահովել վերջիններիս հասանելիությունը հակամարտությունից տուժած կանանց:
- Սահմանել շարժական հոգեբանական աջակցության խմբեր, որոնք կծառայեն սահմանամերձ համայնքներում մինչև հոգեբանական աջակցության մշտական ծառայությունների վերջնական ներդրումը:

Տվյալների հավաքագրում և վերլուծություն

- Պարբերաբար (առնվազն տարեկան) իրականացնել հարցումներ սահմանամերձ բնակավայրերի կանանց շրջանում՝ պարզելու նրանց կարիքներն ու խաղաղաշինական գործընթացներում ներգրավմանը խոչընդոտող խնդիրները:
- Մշակել և հրապարակել պարբերական (տարեկան պարբերականությամբ) համապարփակ զեկույցներ կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքական ներգրավվածության վերաբերյալ:

Տեղեկատվական արշավներ և մեդիայի ներգրավում

- Կազմակերպել տեղեկատվական արշավներ՝ ցուցադրելու կանանց ներդրումը խաղաղաշինությունում, ներգրավելով հանրության լայն զանգվածներին հեռուստատեսության, սոցիալական մեդիայի և տեղական միջոցառումների միջոցով:
- Վերապատրաստել լրագրողներին գենդերային հավասարության, խաղաղաշինության մեջ կանանց դերի, գենդերազգայուն հաղորդակցության վերաբերյալ՝ գենդերային զգայուն լրագրություն ապահովելու նպատակով:
- Սահմանել և տրամադրել կրթաթոշակներ՝ կանանց համար խաղաղաշինության, կոնֆլիկտների լուծման կամ հարակից ոլորտներում բարձրագույն կրթություն ստանալու համար:

Ներդիր. Խաղաղության գենդերազգայուն և գենդերարձագանքող համաձայնագրի ստուգաթերթ

Գենդերային զգայուն մոտեցումը խաղաղության գործընթացներում առանցքային նշանակություն ունի ՀՀ համար, քանի որ այն թույլ է տալիս հասցեագրել հակամարտությունների տարբերակված ազդեցությունը հասարակության տարբեր խմբերի վրա: Տարածաշրջանային բարդ իրավիճակում այս մոտեցումը, որը պահանջում է կանանց և խոցելի խմբերի ակտիվ ներգրավում, ռեսուրսների հավասար բաշխում և համակարգային բարեփոխումներ, կարող է էապես նպաստել կայուն խաղաղության հաստատմանը:

Խաղաղության համաձայնագրերի նախագծման ժամանակ գենդերային զգայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է հետևել հետևյալ սկզբունքներին.

1. **Հստակ բաժիններ և ենթաբաժիններ**

- Առանձնացնել ենթաբաժիններ գենդերային հատուկ հարցերին (օրինակ՝ կանանց դերը կառավարման մեջ, արձագանքներ գենդերային բռնությանը):
- Ներառել գենդերային նկատառումներ բոլոր թեմատիկ բաժիններում և ապահովել դրանց բնական ընթացքը ընդհանուր պատումի մեջ:
    - Օրինակ՝ «Ընդունելով, որ հակամարտությունն անհամաչափ ազդեցություն է ունենում կանանց և աղջիկների վրա՝ խորացնելով գոյություն ունեցող անհավասարությունները»:
    - «Հաստատելով, որ կայուն խաղաղությունը պահանջում է կանանց և այլ մարգինալացված խմբերի լիարժեք և հավասար մասնակցություն»:
    - Հղում անել առանցքային փաստաթղթերին, ինչպիսիք են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևը Կանանց, խաղաղության և անվտանգության վերաբերյալ և ԿՆԽՎԿ-ն (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա):
        - Օրինակ՝ *«Ընդունելով, որ հակամարտությունը տարբեր ազդեցություն է ունենում կանանց և տղամարդկանց վրա՝ խորացնելով առկա անհավասարությունները...»*
        - *«Հաստատելով, որ տնական խաղաղությունը պահանջում է կանանց, երիտասարդների և այլ մարգինալացված խմբերի լիարժեք և հավասար մասնակցություն»*:

Հղում առանցքային փաստաթղթերին

- **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձև** (Կանայք, խաղաղություն և անվտանգություն)

- **CEDAW** (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա)
- **Վերակառուցման և զարգացման գլոբալ օրակարգեր**, որոնք ներառում են գենդերային չափանիշներ:

2. Լեզու

Գենդերային ներառական տերմինաբանություն

- Օգտագործել այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «կանայք, տղամարդիկ և այլ գենդերային ինքնություն ու սեռական պատկանելիություն ունեցող անձինք» ներառականությունն ապահովելու համար:
- Խուսափել ընդհանրական տերմիններից, ինչպիսիք են «քաղաքացիներ» կամ «մարդիկ», եթե դրանք աղոտ են դարձնում գենդերային հատուկ ազդեցությունները կամ պատասխանատվությունները:

Հստակություն անորոշության փոխարեն

- Օգտագործել ճշգրիտ, գործողության կողմնորոշված լեզու: Օրինակ՝
  - Փոխարենը՝ «Խրախուսել կանանց մասնակցությունը կառավարման մեջ»,
  - Օգտագործել՝ «Ապահովել կանանց նվազագույնը 30% ներկայացվածություն հետկոնֆլիկտային կառավարման կառույցներում հաջորդ հինգ տարիների ընթացքում»:

Պարտավորեցնող ձևակերպումներ

- Փոխարինել մեղմ լեզուն («հնարավոր է» կամ «կարող է») ուժեղ, պարտադիր տերմիններով («կիրականացնի», «պարտավոր է» կամ «պետք է»):

Խուսափել կարծրատիպերից

- Խուսափել այն լեզվից, որն ամրապնդում է ավանդական գենդերային դերերը կամ կարծրատիպերը:

3. Կառավարում և քաղաքական մասնակցություն

Կանանց ներկայացվածության քվոտաներ

- Հետկոնֆլիկտային կառավարման կառույցներում պետք է սահմանվեն ներառականության չափանիշներ՝ ապահովելով կանանց ներկայացվածության մեխանիզմներ և առաջխաղացման հնարավորություններ՝ նպաստելով որոշումների կայացման հավասար մասնակցությանը

Կարողությունների զարգացում

- «Կստեղծվեն ծրագրեր՝ վերապատրաստելու և ուղղորդելու կին առաջնորդներին կառավարման մեջ արդյունավետ մասնակցության համար»:

Հավասար որոշումների կայացում

- «Ապահովել կանանց ակտիվ մասնակցությունը սահմանադրություն մշակող հանձնաժողովներում և անցումային կառավարման մարմիններում»:

4. Անվտանգության միջոցառումներ

Պաշտպանություն գենդերային բռնությունից

- «Ստեղծել մասնագիտացված ստորաբաժանումներ անվտանգության ոլորտում՝ սեռական և գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման համար»:
- «Վերապատրաստել անվտանգության բոլոր ուժերին գենդերային զգայուն գործելակերպի և գենդերային բռնության կանխարգելման հարցերով»:

Կանայք անվտանգության ուժերում

- «Ապահովել կանանց ակտիվ հավաքագրումն ու պահպանումը ոստիկանությունում, բանակում և խաղաղապահ ուժերում»:

Ապառազմականացման ծրագրեր

- «Մշակել ԶԶՎ (զինաթափում, զորացրում և վերաինտեգրում) ծրագրեր, որոնք հաշվի են առնում կին մարտիկների և զինված խմբերի հետ կապված անձանց հատուկ կարիքները»:
- Մշակել հարմարեցված վերաինտեգրման ծրագրեր, որոնք կներառեն տեղահանված բնակչության, կին վետերանների և պատերազմից տուժած համայնքների սոցիալ-տնտեսական վերականգնման հատուկ կարիքները՝ ապահովելով նրանց ներառական աջակցությունն ու հնարավորությունների ընդլայնումը»:

5. Արդարադատություն և հաշտեցում

Պատասխանատվություն գենդերային հանցագործությունների համար

- «Ապահովել, որ հակամարտության համատեքստում սեռական բռնությունը ճանաչվի և դատապարտվի որպես պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություն»:

Գենդերային զգայուն անցումային արդարադատություն

- «Ներառել կանանց անցումային արդարադատության հանձնաժողովներում և ապահովել մեխանիզմների հասանելիությունը գենդերային բռնության զոհերի համար»:

Փոխհատուցումներ

- «Մշակել փոխհատուցման ծրագրեր, որոնք տրամադրում են տնտեսական, սոցիալական և հոգեբանական աջակցություն հակամարտության կին զոհերին ու ժառանգներին»:

Համայնքային վերականգնման նախաձեռնություններ

- «Խթանել նախաձեռնություններ, որոնք ապահովում են կանանց և մարգինալացված խմբերի ակտիվ ներգրավվածությունը երկխոսության և

փոխըմբռնման գործընթացներում հակամարտող կողմերի միջև՝ նպաստելով համապարփակ և ներառական հաշտեցմանը»։

- Աջակցել կանանց տնտեսական վերաինտեգրման նախաձեռնություններին, որոնք ներառում են մասնագիտական վերապատրաստում, զբաղվածության ծրագրեր և գործարարության խթանում՝ ապահովելով կայուն տնտեսական մասնակցություն։

6. Փախստականներ և տեղահանված բնակչություն

Անվտանգ վերադարձ և վերաբնակեցում

- «Ապահովել գենդերային զգայուն պլանավորում փախստականների և ներքին տեղահանված անձանց անվտանգ և արժանապատիվ վերադարձի համար»։

Կացարան և ծառայություններ

- «Առաջնահերթություն տալ տեղահանված կանանց և երեխաների կացարանի և կենսական ծառայությունների ապահովմանը»։

Անձնական և իրավական փաստաթղթեր

- «Դյուրացնել կանանց համար անձնական փաստաթղթերի հասանելիությունը՝ ապահովելու նրանց գույքային, ընտրական և սոցիալական ծառայությունների իրավունքները»։

7. Իրականացում և մշտադիտարկում

Գենդերային զգայուն մշտադիտարկման մեխանիզմներ

- «Ստեղծել Գենդերային խորհրդատվական հանձնաժողով՝ պայմանագրի մշակման և դրա իրագործման փուլում՝ վերահսկելու գենդերային դրույթների իրականացումը և ապահովելու գենդերային ներառականություն խաղաղության գործընթացում»։

Հաշվետվողականության պահանջներ

- «Ստանալ պարբերական հաշվետվություններ խաղաղության պայմանագիրը իրականացնող մարմիններից՝ դրա արդարացիության, ներառականության և տարբեր խմբերի կարիքների հասցեագրման վերաբերյալ»։

Ցուցանիշներ ու ցուցիչներ

- Մշակել գենդերային հատուկ ցուցանիշներ, ինչպիսիք են՝
    - Կանանց տոկոսը կառավարման պաշտոններում
    - Գենդերային բռնության դեպքերի քանակը հետկոնֆլիկտային գոտիներում
    - Կանանց և աղջիկների առողջապահության և կրթության հասանելիության ցուցանիշները

8. Հակամարտությանը հատուկ հարմարեցում

Մշակութային համապատասխանություն

- Արտացոլել տեղական սովորույթները և ավանդույթները՝ միաժամանակ ապահովելով դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների համընդհանուր չափանիշներին:

Հակամարտությանը բնորոշ մարտահրավերներ

- Անդրադառնալ կոնկրետ հակամարտության գենդերային ազդեցությունների առանձնահատկություններին, ինչպիսիք են տեղահանման օրինաչափությունները կամ տնտեսական խոչընդոտները:
- Օրինակ՝ «Տարածաշրջաններում, որտեղ տեղի են ունեցել զանգվածային տեղահանություններ, պետք է մշակվեն վերաբնակեցման ծրագրեր, որոնք ներառում են տեղահանված կանանց բնակարանային և սոցիալական աջակցության հատուկ մեխանիզմներ»:
- «Եթե հակամարտության ընթացքում կանայք ներգրավված են եղել անվտանգության ոլորտում, խաղաղության պայմանագիրը պետք է ներառի կանանց մասնակցության ապահովումը հետկոնֆլիկտային անվտանգության բարեփոխումներում և խաղաղապահ առաքելություններում»:

Գրականության ցանկ

- ՀՀ վիճակագրական կոմիտե. “Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2024 / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե.” Armstat.am, 2024. https://armstat.am/am/?nid=82&id=2700.
- Carnegie Corporation. “Tracking War’s Disproportionate Impacts on Women | Carnegie Reporter Summer 2024 | Carnegie Corporation of New York.” Carnegie Corporation of New York, 2024. https://www.carnegie.org/our-work/article/tracking-wars-disproportionate-impacts-on-women/.
- Council on Foreign Relations. “Including Women at the Peace Table Produces Better Outcomes.” Council on Foreign Relations, 2019. https://cfr.org/womens-participation-in-peace-processes/.
- Eggert, Militsa. “EU4Gender Equality Reform Helpdesk’s Support (2021-2024) for Armenia - EU NEIGHBOURS East.” EU NEIGHBOURS East, March 11, 2024. https://euneighbourseast.eu/news/publications/eu4gender-equality-reform-helpdesks-support-2021-2024-for-armenia/.
- GIWPS. “Advancing Women’s Participation in Post-Conflict Reconstruction.” GIWPS, August 9, 2021. https://giwps.georgetown.edu/resource/advancing-womens-participation-in-post-conflict-reconstruction/.
- “Women, Peace and Security Annual Report 2019–2020.” GIWPS, 2019. https://giwps.georgetown.edu/resource/women-peace-and-security-annual-report-2019-2020/.
- Helix Consulting LLC. “Կառավարություն - Կառուցվածք - Հայաստանի Հանրապետության Կառավարություն.” Www.gov.am, 2025. https://www.gov.am/am/structure/.
- OxYGen Foundation. “Կանանց քաղաքական առաջնորդության խնդիրները Հայաստանում.” Oxygen.org.am, 2024. https://oxygen.org.am/havasar2023/page43407766.html.
- “Women Empowerment for Peace and Security in Armenia Project - OxYGen Foundation.” OxYGen Foundation, November 17, 2022. https://oxygen.org.am/en/completed_projects_eng/women-peace-and-security/.
- Secretary-General, UN. “Women and Peace and Security :: Report of the Secretary-General.” United Nations Digital Library System. UN, September 25, 2020. https://digitallibrary.un.org/record/3888723?ln=en&utm.
- UN Women. “Facts and Figures: Peace and Security.” UN Women, 2023. https://www.unwomen.org/en/what-we-do/peace-and-security/facts-and-figures.
- “Women, Peace, and Security 2020–2021 Annual Report.” UN Women – Headquarters, December 17, 2024. https://www.unwomen.org/en/digital-

library/publications/2023/02/women-peace-and-security-2020-2021-annual-report.

- "Women's Participation and a Better Understanding of the Political | Global Study on the Implementation of UN Security Council Resolution 1325." Unwomen.org, 2015. https://wps.unwomen.org/participation/.
- United Nations. "Landmark Resolution on Women, Peace and Security (Security Council Resolution 1325)." Un.org. United Nations, 2000. https://www.un.org/womenwatch/osagi/wps/.
- Women, UN. "GENDER and the ROLE of WOMEN in COLOMBIA'S PEACE PROCESS," 2016. https://www.usip.org/sites/default/files/Gender-and-the-Role-of-Women-in-Colombia-s-Peace-Process-English.pdf.